№ 236 ԿԻՐԱԿԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1915 ԿԻՐԱԿԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 236

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և
7 ամսվանը 6 րուբլի:
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—7
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

„ՄՇԱԿԻ" խմբագրութիւնը յայտնում է, որ այսօր, կիրակի, հոկտեմբերի 25-ին, ցեր. ժ. 1-ին, թերթի հանգուցեալ խմբագիր

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ

ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ-ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահվան երկրորդ տարելիցի առիթով Խօջիվանքի գերեզմանատանը հանգուցեալների դամբարանների վրա տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այսօր, կիրակի, հոկտեմբերի 25-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Խօջիվանքի գերեզմանատանը տեղի է ունենալու ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ընկերութեան հիմնադիր և առաջին նախագահ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

մահվան ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ առիթով:

769. 1—1

ԳՐԻԳՈՐ ԵՒ ՏԻԳՐԱՆ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՆԵՐԸ իրանց ընտանիքներով յայտնում են, որ այսօր, կիրակի, հոկտեմբերի 25-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, իրանց հանգուցեալ եղբայր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահվան երկրորդ տարելիցի առիթով տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ:

Կիրակի, հոկտեմբերի 25-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՆԻԿՈԼԱՅ ԲԱԲԱՅԵԱՆ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

մահվան առիթով, որի մասին յայտնում է հանգուցեալի ընտանիքը: Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամը 11-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին.

770. 1—1

Հայկական Կենտ. Կոմիտէն եւ Կովկ. Հ. Բարեգ. Ընկ.

Ամսիս 25-ին

ՄԻՕՐԵԱՅ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Է ԱՆԵԼՈՒ

ՅՕԳՈՒՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Խնդրվում է հասարակութեանը պատրաստել դօշակներ, վերմակներ, բարձեր, դօշակի մթիներ, բարձի երեսներ, տաք շորեր.

Սայլերը փողոցներով անցնելիս զանգակներ և փողեր կը հնչեցնեն: Կարիքն ընդունում է սոսկալի չափեր. 100,000-ից աւելի գաղթականներ զրկված են այս միջոցներից:

առ. (հ. շ. կ.) 750. 4—4

Թիֆլիսի կայսերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ

Ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը: Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆօն № 16—67:

առ. 753. 50—5

ԲԺԻՇԿ
Տուշանիկ Նազարբէկեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային Ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը:

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(ե.ե.կ.) առ. 634. 100—18

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հայոց Դրամատիկ Ընկերութիւն
Երկուշաբթի, հոկտեմբերի 26-ին, 1915 թ.
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը ներկայացնէ
ՍԱՐԴՈՒԻ յայտնի դրաման

ՀԱՅՐԵՆԻՔ

5 արար. Թարգմ. Նէլսոնի:
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ԽՈՒՄԲԸ
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին: ◆◆ Տեղերի գները սովորական են:
Տոմսակները ծախվում են միմիայն Թատրոնի կասսայում:
Կասսան բաց է ամենայն օր առաւ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 6—8-ը:
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամ՝ ՍՏ. ԳԱԼՍՏԵԱՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Անբերրիութիւնից վնասված մի քանի հայ գիւղերի ներկայացուցիչներ դիմել են Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան վարչութեանը՝ խնդրելով միջոցներ գտնել իրանց էժան գնով ցորեն և ալիւր մատակարարելու: Ընկերութեան վարչութիւնը, տեղեակ լինելով, որ անբերրիութիւնից վնասվել են այս տարի և՛ ուրիշ բազմաթիւ գիւղեր զանազան հայաշատ շրջաններում և միևնոյն ժամանակ նկատի առնելով այն հանգամանքը, որ Հիւսիսային Կովկասից ալիւրի և ցորենի անկանոն և անբաւարար ներմուծումը դէպի Անդրկովկաս նպաստում է նրանց գների չափազանց բարձրանալուն և այդպիսով դժուարին կացութեան մէջ դնում անբերրիութիւնից վնասված հայ գիւղական ազգաբնակութիւնը, որոշեց, ապագայ աղէտի առաջն առնելու նպատակով, կազմել Ընկերութեան անդամներից և բանկային հաստատութիւնների ներկայացուցիչներից մի առանձին կոմիտէ, դնելով նրա վրա պարտաւորութիւն ալիւր և ցորեն գնել Հիւսիսային Կովկասում և մատակարարել անբերրիութիւնից վնասված հայ գիւղերին առքի գնով՝ միայն աւելացնելով նրա վրա ճանապարհածախքը:

Այս նպատակով Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան վարչութիւնը դիմում է այն բոլոր հայ գիւղերին, որոնք վնասվել են անբերրիութիւնից և ալիւրի ու ցորենի պակասութիւն են զգում այժմ կամ կարող են զգալ մօտաւոր ամիսների ընթացքում, յայտնել այդ մասին Ընկերութեան վարչութեանը՝ նախապէս կատարելով հետևեալ պայմանը.—կազմել համախօսական (мірскій приговоръ) և անշուշտ նրա մէջ յիշել, թէ՝

ա) Որքա՞ն վագօն ալիւրի կամ ցորենի կարիք ունի գիւղը համայնքի կերակրման համար մինչև յետագայ հունձը:

բ) Ի՞նչ կարգով կը կամենայ գիւղը ստանալ ալիւրը կամ ցորենը (ամսական 1, 2, 3 վագօն և այլն): գ) Ալիւր թէ ցորեն է կամենում գնել գիւղը: դ) Երկաթուղու ո՞ր կայարանը պիտի ուղարկվի գնած ալիւրը կամ ցորենը: ե) Ընտրել լիազօրներ, որոնք բանակցութեան մէջ մտնեն Ընկերութեան վարչութեան հետ, և զ) յիշել անպատճառ համախօսականի մէջ, որ գիւղական համայնքը երաշխաւոր և պատասխանատու է իր լիազօրների գործունէութեան համար:

Լիազօրները պարտաւոր են վաղօրօք հաւաքել գիւղացիներից պատուիրած ցորենի կամ ալիւրի գինը, որպէսզի ապրանքը ժամանակին կարողանան ստանալ և չը հանդիպեն աւելորդ դժուարութիւնների և ծախքերի:

Ընկերութեան վարչութիւնը, ստանալով որոշ չափով համախօսականներ հայ գիւղերից, անմիջապէս դիմումն կանէ երկրի բարձր իշխանութեանը՝ վագօնների «նարեադներ» ստանալու և ապա բանկային հաստատութիւնների միջոցով պատուիրած ցորենն ու ալիւրը գնելով Հիւսիսային Կովկասից՝ կուղարկէ այն կայարանները, որոնք ցոյց են տրված համախօսականների մէջ: Պատուիրած ցորենի կամ ալիւրի արժէքը վճարելուց յետոյ բանկային հաստատութեան՝ ընտրված լիազօրները կընդունեն ցորենը կամ ալիւրը և կը բաժանեն իրանց մէջ համաձայն նախապէս կազմած ցուցակի և վճարած դրամի:

Համախօսականները պէտք է ուղարկել այս հասցէով—Тифлисъ, Правленіе Армянскаго Сельско-хозяйственнаго и Кустарнаго Общества.

Նախագահ Ընկերութեան՝ Ա. Սահակեան
Անդամ քարտուղար վարչութեան՝ Ա. Մխիթարեան

առ. (կ.) 738. 3—3

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութինեան
Ն. Ն. Վեսելօվզօրօվ
Վ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ կ.) առ 742. 100—3

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29.

առ. (ա. օ.) 504. 100—71

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով:

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերեուլկից:

(ա. օ.) առ. 515. 100—56

ԱՄԵՆԱՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Աւստրիայի կայսրները հռչակված են իբրև ամենաքրիստոնեայ և ամենաառաքելական թագաւորներ, ջերմեռանդ և հարազատ զաւակներ, սուրբ քրիստոնէական եկեղեցու, ճշմարիտ թարգման և սպասաւոր Յիսուս Քրիստոսի պատգամների: Եւ իբրև ապացոյց մանաւանդ այս վերջին յատկութեան, նրանք ամեն տարի, աւագ հինգշաբթի օրը, ոտնլուայի օրը, իրանք են կատարում ոտնլուայի հանդէսը, և ամենազօր կայսրը ի նշան խոնարհութեան լուանում է իր հպատակներից 12 հոգու ոտները:

Որպիսի՛ հեզութիւն և քրիստոնէական խոնարհութիւն:

Սակայն այդ ամենաքրիստոնեայ, առաքելական և ամենաբարեպաշտ՝ Քրիստոսի հեզ աշակերտի դիմակի ներքոյ թագնված է մի սոսկալի ֆանատիկոս, մի մարդ, որ ձեռք է մեկնում Թիւրքական գազանին՝ խողխողելու հարիւր հազարաւոր քրիստոնեաներ, որովհետև այդ հարիւր հազարաւորները չեն պատկանում կաթօլիկ եկեղեցուն, այլ նոյն քրիստոնէական մեծ եկեղեցու մի այլ ճիւղին, լուսաւորչական ճիւղին, և իր հովանաւորութեան ներքոյ է առնում միայն մի հարիւր հազար հայեր, որոնք կաթօլիկ դաւանութեան են պատկանում:

Եթէ հռոմէական կաթօլիկ եկեղեցու պետը դիմումն է անում Թիւրքաց կառավարութեանը միայն կաթօլիկ հայերի համար, նրա այդ քայլը հասկանալի է, որովհետև Թիւրքաց կառավարութիւնը կարող է առարկել նրան, թէ դուք հոգ տարէք միայն ձեր հօտի համար: Բայց մի մեծ պետութեան կայսր եթէ գտնում է, որ գործվում են սոսկալի գազանութիւններ քրիստոնեաների դէմ, չը պէտք է խտրութիւն դնէ քրիստոնեաների մէջ, չը պէտք է ի նկատի ունենայ, թէ այդ քրիստոնեաները եկեղեցու ո՛ր ճիւղին են պատկանում: Ասելով, թէ Ֆրանց-Յովսէփ կայսրը իր անձնական հովանաւորութեան ներքոյ է առնում հայ-կաթօլիկներին, դրանով կողմնակի կերպով ասված է լինում, թէ հայ լուսաւորչականների հետ վարվեցէք ինչպէս կամենաք:

Իսկական ամենաբարեպաշտ և ամենաջերմեռանդ քրիստոնեան այլ լեզու կը բանեցնէր Թիւրքերի հետ. Նա կը պահանջէր դադարեցնել հարիւր-հազարաւոր անմեղ քրիստոնեաների, այն էլ կանանց, երեխաների, աղջիկների կոտորածը, որովհետև եթէ նոյն իսկ հայ ազգի մի չնչին մասը՝ տղամարդկանց մի մասը զէնք է առել Թիւրքիայի դէմ, ապստամբել, դաւադրել, մի՞թէ դրա մէջ մեղաւոր են հարիւր-հազարաւոր երեխաներ, կանայք, աղջիկներ. Եւ, վերջապէս, պատերազմական ո՞ր օրէնքը, ո՞ր խղճմտանքը թոյլ է տալիս կոտորել խաղաղ, անզէն բնակիչներին:

Ոչ, պէտք է ընդունել, որ քրիստոնէական եկեղեցին էլ այլասերվել է, երբ մի քրիստոնեայ թագաւոր խտրութիւն է դնում քրիստոնեաների մէջ, թոյլ է տալիս կոտորել մեծ մասը, իսկ միայն մի փոքր մասն իր հովանաւորութեան ներքոյ է առնում:

Ի հարկէ, մենք չափազանց ուրախ ենք, որ մեր կաթօլիկ հայ եղբայրները գոնէ կազատվեն կոտորածից, և մեր խօսքը բնաւ չէ վերաբերում նրանց. բայց մենք չենք կարող մեր սրտի մորմոքը, ցաւը չարտայայտել, երբ տեսնում ենք, որ նոյնիսկ մի ոտքը գերեզմանի մէջ դրած զառամեալ մի թագաւոր, կայսր Ֆրանց-Յովսէփը, այդքան նեղ կերպով է հասկանում իսկական քրիստոնեայի պարտականութիւնը:

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ:

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի մօտ մեր զօրքերը հոկտ. 22-ին առաջացան մի փոքր դէպի արևմուտք Ակկել լճի մօտից. Հրային կռիւ է ամբողջ զօրաճակատի վրա:

Եակօբշտադտի շրջանում և Դվինայի մօտ դրութիւնը անփոփոխ է.

Դվինսկի մօտ՝ Սվենտէն լճից դէպի հարաւ գերմանացիք հոկտ. 22-ի երեկոյեան ժամը 5-ին յարձակում գործեցին Պլատոնովկա գիւղի վրա, բայց կրեցին խոշոր կորուստներ. Առ այժմ կռւի դաշտում գտնվել են մօտ 1000 դիակ:

Ռաֆալովկայից դէպի արևմուտք, Ստիրի մօտ հակառակորդը հոկտ. 21-ի երեկոյեան յարձակում գործեց Կօստիւխնովկա գիւղի մօտից. Գիշերային յամառ կռւից յետոյ մեր զօրքերը փախուստի դարձրին աւստրիացիներին, ձեռք ձգելով 2 թնդանօթ, 3 գնդացիր, 250 գերի, շատ զէնք:

Ն. Օլէկսինեցի մօտ, Վօլիցայի շրջանում մեր զօրքերը յարձակում գործեցին հակառակորդի վրա, որ մօտեցել էր մեր խոճթերին. Սուինային կռւից յետոյ հակառակորդը վանվեց, թողնելով մեր ձեռքում 3 օֆիցեր և 160 զինուոր:

Ստրիպի աջ ափում՝ Սեմիկօվցէի շրջանում կատաղի կռիւը շարունակվում է։ Երկուստեք թնդանօթային կրակը շատ ուժեղ է։

Բալտիկ ծովում մեր ռազմանաւերը ռմբակոծեցին գերմանական դիրքերը Շլոկի մօտ։

ՓԱՐԻԶ.—Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն։

Բէլգիայում մեր արտիլերիան երկարատեւ ռմբակոծութեան ենթարկեց Լոմբարդզիւդէի շրջանում թշնամու դիրքերը և աջողութեամբ մրցում էր գերմանական հրետանիների հետ, որոնք ռմբակոծում էին մեր խրամատները։ Յամառ թնդանօթային կռիւներ տեղի էին ունենում Արտուայում և Ժիվանշի անտառի շրջանում, նաև Սոմմայից դէպի հարաւ։ Շամպանիում օրվայ ընթացքում շարունակվեց յամառ կռիւ։ Այստեղ մենք սկզբում բոլորովին ետ մղեցինք թշնամուն մեր առաջակայ խրամատների մօտից, որոնց նա գրաւել էր երէկ. նոր՝ անսովոր կատաղի յարձակումից յետոյ գերմանացիներին աջողվեց նորից գրաւել մի քանի կէտեր շատ փոքր զօրաճակատի վրա։ Լակուրտինի մօտ թշնամու յարձակումը շեշտակի վանվեց։ Վօգէզներում վերսկսվեց թնդանօթաձգութիւն. Վիօլիա շրջանում տեղի էր ունենում յամառ կռիւ ռումբերով։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են,

Ռազմադաշտի լեռնոտ մասում խիտ մառախուղը արգելք եղաւ արտիլէրիայի գործողութիւններին։ Էնգիզո նահանգում թշնամու անակնկալ յարձակումը վանվեց։ Իզօնցօ շրջանում կռիւը երէկ շարունակվեց մեծ յամառութեամբ։ Զագօրան մենք ամրացրինք և պաշտպանեցինք թշնամու նոր հակայարձակումներից։ Ասլավիա շրջանում տաք կռիւ էր. դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում։ Թշնամին կորցրեց 132 գերի։ Կարսօյում թշնամին աստիճանաբար կանգնեցրեց մեր առաջխաղացումը։ Թշնամին շտապով օգնութիւն ստացաւ։ Մենք երէկ վերցրինք նոր խրամատներ և ձեռք ձգեցինք գերիներ ու ռազմամթերք։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 հոկտեմբերի

ՓԱՐԻԶ.—Լէբուրժէի մօտ երկու աէրօպլան՝ իջնելիս՝ ընդհարվեցին։ Չորս օդագնաց այրվեցին։

ՕԴԵՍՍԱ.—Կօօպէրատիվ համագումարին զուգընթաց բացվեց սպառողական ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մատակարարական գործի առանձին խորհրդակցութիւնը յատկացրեց 6.200,000 ռուբլի՝ Պետրօգրադի ազգաբնակութեան համար մթերքներ գնելու։

ԼՕՆԴՕՆ.—Թագաւորը գիշերը հանգիստ անցրեց. ախորժակը լաւանում է, բայց թագաւորը դեռ ցաւ է զգում մանաւանդ շարժվելու փորձերի ժամանակ։

ԱԹԷՆՔ (Ճեպընթաց).—Զաիմիսը մեկնեց պալատ՝ յանձնելու թագաւորին կաբինէտի հրաժարականի խնդրագիրը։

Թագաւորը հրաւիրեց բոլոր կուսակցութիւնների պարագլուխներին խորհրդակցութեան։

Վենիզէլօսին թշնամի լրագիրների մեծ մասը խորհուրդ է տալիս արձակել պալատը և լիբէրալ կուսակցութեանն է յանցաւոր ճանաչում մինիստրական ճգնաժամի համար։ «Պատրիս» լրագիրը գրում է. «Յունաստանը ապրում է այնպիսի լուրջ րոպէ, որ բոլոր քաղաքացիք առանց հայեացքների խտրութեան պէտք է հայցեն Աստուծու ողորմածութիւնը՝ վերջին դէպքերից տանջված երկիրը ազատելու համար»։

Թագաւորը առանձին-առանձին ունկնդրութեան ընդունեց կաբինէտի կազմի մէջ մտնող քաղաքական խմբակների պարագլուխներին։ Լիբերալ կուսակցութեան պարագլուխը և պատգամաւորների պալատի նախագահը դեռ չեն կանչվել։ Վերջինս ընդունեց Գունարիսին։ Թագաւորը երկար խորհրդակցեց կաբինէտի անդամների հետ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Vos. Zeit.»-ի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ Դարդանէլում գործող դաշնակից զօրքերի ընդհանուր հրամանատար գեներալ Մօնրօն պատրաստվում է, ըստ երեւոյթին, նոր արշաւանքի լայն ծաւալելու։ Վերջերս Եգիպտոսից դաշնակիցներին օգնութիւն հասաւ։

◆ «H. B.»-ին Հաագից տեղեկացնում են, որ անգլիացիք լայն ռազմի պատրաստութիւններ են տեսնում Սուէցի ջրանցքը թուրք-գերմանական նոր հնարաւոր արշաւանքից ապահովելու համար։

◆ «B. B.»-ն գրում է, որ Կրակովում տեղի ունեցաւ լեհ հասարակական գործիչների խորհրդակցութիւնը՝ Վարշավայում և Ռուսական Լեհաստանում տիրող դրութիւնը քննելու համար, ուր պայքար է մղվում գերմանական և աւստրիական զինուորական իշխանութիւնների միջև։ Խորհրդակցութեան մէջ ապացուցել են, որ որեւէ յոյս դնել, թէ Բերլինի կառավարութիւնը զիջումներ կանէ լեհերին, անօգուտ է, որովհետև նա հաւանութիւն է տալիս սլաւոն ազգաբնակութեանը ճնշելու նախկին քաղաքականութեան և լեհական հողերը յափշտակելուն։ Գալիցիայի փոխարքայի կարգադրութեամբ խորհրդակցութիւնը փակվեց, որ զայրոյթ առաջ բերեց լեհ ազգաբնակութեան մէջ։

◆ Նօբէլի սահմանած բժշկութեան մրցանակը տրվել է Վիեննայի համալսարանի դոցենտ Բարոնին, որ ներկայումս գտնվում է ռուսական գերութեան մէջ Մերվում։

◆ Օդեսսայից հեռագրում են «К. Сл.»-ին. «Մեծ մօրալ ու նիւթական աջողութեամբ կայացաւ Ղազեանի դասախօսութիւնը «Մեծ պատերազմը և հայերը» թեմայով։ Ներկայ էր ամբողջ հայ գաղութը և ռուս ինտելիգենցիան։ Հայերի կրած սարսափների նկարագրութիւններից շատերը լալիս էին։ Դասախօսութեան երկրորդ մասում դասախօսը մատնանշել է այն ճանապարհները, որոնցով կարելի է լուծել հայկական հարցը»։

◆ Սպանական թագաւոր Ալֆօնսը համաձայնել է Վիլհէլմի առաջարկին՝ միջնորդ լինելու հաշտութեան բանակցութիւնների հարցում։ Վիլհէլմը պապին ուղղած խնդրքի մէջ ի միջի այլոց խոստանում է լայն իրաւունքներ տալ կաթոլիկ եկեղեցուն Գերմանիայում։

◆ «У. Р.»-ը հաղորդում է, որ գլխատվել են բուլղարական ռազմանաւերի հրամանատարներ Պրոտկինը, Սէրաֆիմօվը, Իւանօվը և Դօբրովը՝ Ռուսաստանին Վառնայի պաշտպանութեան պլանները յանձնելու համար։

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՉԻ ԱՌԻԹՈՎ

Ռուսական դեմօկրատիայի ներկայացուցիչները շատ ուշացած իրանց հասարակական հրապարակական խօսքով։ Անգլիական, բելգիական և մանաւանդ ֆրանսիական սօցիալիստ կուսակցութիւնները վաղուց են արտասանել իրանց հարկաւոր խօսքը՝ առանձին-առանձին և խմբակցական որոշումներով։ Այստեղ չը խօսենք այն պայմանների ու պատճառների մասին, որոնք, գլխաւորապէս, պայմանաւորել են մի այդպիսի յապաղում ռուսների կողմից։

Բայց լաւ է ուշ, քան երբէք։ Եւ մենք միայն խորին գոհունակութեամբ կարող ենք ողջունել այսօր Գէօրգ Պլեխանովի գլխաւորութեամբ հրատարակված հաւաքական կոչը, (լոյս տեսած Սամարայի «Волжскій день» թերթում), որ արտատպվեց ռուսական և հայկական համարեա բոլոր օրգաններում։ Այդ կոչը չունի նեղ ֆրակցիոնական և ոչ իսկ զուտ կուսակցական բնոյթ։ Նրան մասնակցել են, ինչպէս շեշտված է, ռուս ընկերվարական մտքի տարբեր հոսանքների ներկայացուցիչները։ Մենք պիտի զգուշանանք «բոլոր հոսանքներ» ասելուց, լաւ իմանալով որ կան, տարաբաղդաբար, «ընկերվարական հոսանքի» ֆիրմայի տակ գործող գրուպաներ, որոնք վաղուց արդէն հանդէս են գալիս՝ որպէս փաստօրէն բլանքիստներ և անարխիստներ։

Սկզբունքային բացատրութիւնները չեն, որ նորութիւններ են կազմում այդ նոր կոչի մէջ։ Ռուս ընթերցող հասարակութեանը վաղուց է յայտնի Գ. Պլեխանովի կրկնակի բացատրութիւններից, թէ ինչպէս պիտի ըմբռնել ու լուսաբանել արդի համաշխարհային արիւնահեղ ողբերգութեան բնոյթը, և ինչ գործնական դիրք պէտք է ունենայ Ռուսիայի առաջաւոր դեմօկրատիայի քաղաքական և սօցիալ-գաղափարային ներկայացուցչութիւնը դէպի պատմական երեւոյթը, դէպի տիրող հարկադրական մոմենտը։ Ներկայ կոչի հետաքրքրականութիւնը՝ իբրև նորութիւն կայանում է այն գործնական երանգների մէջ, որ ուղղել են հեղինակները իրանց գաղափարակիցներին, կազմակերպված մասսային։ Դա ակտիվ, կենդանի մասնակցութեան շեշտակի լօզունգն է՝ հայրենիքի պաշտպանութեան գործը ամուր, ապահով հիմքերի վրա դնելու համար. դա վտանգաւոր, հզօր թշնամու պարտութեան անհրաժեշտութեան յատուկ արտայայտութիւնն է՝ Ռուսիան տնտեսապէս ազատագրելու համար գերմանական ագրեսիվ իմպերիալիզմից և Արեւմուտքի դեմօկրատականացած Եւրոպան ազատ պահելու համար պրուսա-գերմանական միլիտարիզմի ռէակցիոն արշաւանքներից։

«Անտարբեր նայել ներկայ պատերազմի ելքին,—կարդում ենք կոչի մէջ,—հաւասար կը լինէր քաղաքական ինքնասպանութեան։ Պրոլետարիատի և գիւղացիութեան ամենակարեւոր և ամենակենսական շահերը ձեզանից պահանջում են՝ երկրի պաշտպանութեան գործին իրական աջակցութիւն ցոյց տալ։ Ձեր նշանաբանը պիտի լինի՝ արտաքին թշնամուն յաղթելը...»։

Նման իրաւացի խորհուրդներով լի է ռուս սօցիալիստների կոչը։

Չենք ուզում թաքցնել, որ հայ ռամկավարների կողմից ևս եղել են նոյնանիշ բացատրութիւններ՝ տեսական ու գործնական բնաւորութեամբ։ Հայ-դեմօկրատները դեռ պատերազմի առաջին շաբաթից սկսած՝ բազմաթիւ յօդուածներով որոշել են իրանց սկզբունքային դիրքը դէպի պատերազմը ամենայն յստակութեամբ ու վճռականութեամբ, անկախ նրանից, թէ ինչ դիրք կունենան մարքսիզմի միջազգային և ռուսական կօրիֆէյները։ Մինչև այժմ անշեղ ու անվրէպ պահպանված է միևնոյն տեսակէտը։ Եւ պէտք է ասել, որ այսօր այդ տեսակէտը յաղթանակել է ռուսական դեմօկրատիայի շարքերում։

B. Lucifer

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

⁂

Արծիւը հզօր թռչում էր վերև,
Տենչում էր ազատ, անհուն բարձունքին...
Բայց նրա տակից շղթան էր քաշում,
Նրան ներքևից երկիրն էր կանչում,
Ուր շղթան ամուր մեխված էր գետնին...
Եւ տարուբերվում շղթան երկրաւոր,
Մերթ ելնում, ձգվում,
Մերթ սողում գետնին...
Այդպէս գալարվում էր, տատանվում անվերջ,
Ճկուն ու սողուն
Շղթան երկրաւոր...

Մ. Արազեան

ՁԱՅՆ

«Այսօրվայ յաղթվածներին, որոնք վաղը յաղթող պիտի լինեն»

... Դուք, որ թողեցիք անդ ու անդաստան, տուն և ընտանիք, կի՛ն ու երեխայ, ծնող, քոյր, եղբայր չար բաղդի կամքին և հպարտ կերպով հրացան առած կռւի դաշտ ելաք...

... Դուք, որ գնում էք ահե՛ղ կռւի մէջ Նոր-կեանք կռելու և խենթի նման չէք էլ խնայում ձեր կեանքը անգին վահա՛ն մեզ նման շատերի՛ համար...

... Դուք, որ վաղ թէ ուշ՝ պիտի խորտակէք դարաւոր ժայռը գաղի՛ր բռնութեան և պէտք է ստեղծէք մի նոր, մեծ աշխարհ վե՛հ ու գեղեցիկ...

... Դուք, որ վաղ թէ ուշ՝ յաղթող պիտի լինէք և ազատութեան, մեծ-ազատութեան լոյսը պիտի վառէք ամենքի ծարաւ, լուսատենչ հոգում։

Ձեր գովքն եմ երգում
Փառք և պատի՛ւ ձեզ...

Սեդրակ Յովհաննիսեան

ՄԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՏԵՐՄԵՆԻ ՀԵՏ

Նախ քան իր նոր պաշտօնատեղին գնալը՝ Վանի նոր նշանակված նահանգապետ (շրջանապետ՝ նահանգապետի իրաւունքներով) գնդապետ Ալֆրէդ Իօսիֆօվիչ պ. Տէրմէնի հետ մենք տեսնվեցինք Իգդիրում մի քանի անգամ և երկար զրուցեցինք նրա առաջիկայ գործունէութեան և Վանի մօտալուտ կարիքների մասին։

Վանի նոր նահանգապետը 50 տարեկանի մօտ մի անձ է. թիկնաւէտ, միջին հասակի, իր շարժումների մէջ վերին աստիճանի քաղաքավարի և սիրալիր։ Նրա ֆրանսիական ծագումը դրել է Տէրմէնի վրա իր կնիքը. եռուն, ոգեւորվող, երազող և անկեղծ։ Նա ամբողջովին տարված էր իր առաջիկայ պաշտօնի և միսիայի խնդիրներով ու հոգսերով։

— Այսպէս անկարելի է. երկիրը պէտք է շէնացնել, պէտք է նրան կեանքի բերել, իսկ դա անկարելի է առանց բնակչութեան, և ահա ինձ հետ գնում են Վան 1000-ի չափ վանեցիներ,—ասաց Տէրմէնը։

. . . .

— Ի՞նչ ծրագիրներով էք գնում դուք ձեր նոր պաշտօնատեղին։

— Օ՜, ծրագիրների մասին մի խօսէք, եթէ ոչ մենք երկար ժամեր պիտի անցնենք միասին. ծրագիրներս շատ են, բայց ինչ կարող եմ անել մենակ, առանց հասարակութեան աջակցութեան, առանց ինտելիգենտ ույժերի, աշխատաւորների։ Ահա դրանք են, որ ներկայումս պակասելու են ինձ.

— Ձեզ օգնականներ պակասելու չեն, գնդապետ, եթէ միայն պարզ լինի ձեր վարչական հաւատամքը,—աւելացրի ես։

— Ահա իմ հաւատամքը,—ասաց նա և, հանելով պայուսակից իր մի շարադրութիւն՝ «Воспоминанія администратора» վերնագրով, կարդաց ինձ հետեւեալ տողերը.

«Ադմինիստրատորը կառավարութեան ներկայացուցիչն է և, որպէս այդպիսին, նա պարտական է իրան հաւատացած ազգաբնակութեանն առաջնորդել պրոգրէսի ուղիով. դրա համար էլ ադմինիստրատորը կրթված անձն է, այս բառիս ամենաբարձր մտքով»։

— Ահա իմ հաւատամքը. իսկ մանրամասնութիւնների հետ դուք կարող էք ծանօթանալ նոյն այս գրքի բովանդակութիւնից։

Այս ասելով նա նուիրեց ինձ իր աշխատութիւնը։

Յետոյ, երբ ես կարդացի այդ գրուածքը, կատարելապէս համոզվեցի Վանի նոր նահանգապետի ազնիւ ձգտումների հետ, եթէ միայն նա ժամանակ ունենայ իրագործել այդ ձգտումները։

— Այժմ Վանում ժողովված են մի քանի հազարներ, իմ գնալուց են սպասում ճանապարհին երկու հազարի չափ գաղթականներ, որոնց մէջ կան կանայք, երեխաներ։ Ես չէի ուզում դրանց տանել հետս, սակայն վանեցի գաղթականները վերադառնում են իրանց հայրենիք ամեն օր, ամեն ժամ, ամեն ճանապարհներով. ինձ մնում է միայն կարգաւորել այդ երթը, որ գնան ապահով, անվտանգ. իսկ այս ճանապարհը Կըզըլ-Դիզէով սրանից յետոյ շատ էլ ապահով չէ և դժուար է, ուստի ես յարմարութիւններ եմ ստեղծելու, որ գնան ուրիշ ուղիով՝ Խօյ-Սալմաստ-Բաշկալէի գծով, որը թէև փոքր ինչ երկար է, սակայն գլխովին ապահով։ Նախ պէտք է ինձ ծանօթանալ երկրի կարիքների հետ. ասում են, որ շատ գիւղեր քար ու քանդ են եղած։ Դա ունի նաև իր առաւելութիւնը. պէտք է նոր ձեւի գիւղեր հիմնել. կանոնաւոր, լայն փողոցներով, հրապարակով, եկեղեցիով, դպրոցով և մանաւանդ ծառերով, ծառերով ու ծառերով. պէտք է դուրս գալ այն որջերից, որոնց մէջ ապրում են հայերը, նոր ձեւի տներ են հարկաւոր։

Եւ այս նիւթի մասին նա երկար խօսեց. իմ խորհուրդներս, որպէս գիւղատնտեսի, խնդրեց և նշանակեց իր յուշատետրի մէջ։

— Ինձ հետաքրքրում է մի այլ հարց ևս. ինչ պաշար կայ ներկայումս երկրում. ասում են, որ այս տարվան առատ հունձը մնացել է չը քաղված, պէտք է քաղել, պահել-ամբարել այդ՝ գարնան համար. կան թաղնված մթերներ, որոնցով կարող է ապրել 100 հազարաւոր բնակչութիւն. պէտք է ապահովել, որ դրանք չը գողացվեն, չը յափշտակվեն. իսկ դա մեծ գործ է. մնում է աշնան ցանքսը, գարնան վար ու ցանքսը, առանց որի երկիրը կը մնայ ամայի։ Պէտք է որ առաջ երկիր գնալ և դրանց մասին հոգ տանել։ Իսկ այն հարիւրաւոր, հազարաւոր որբերը, որոնք թափված են այստեղ Կովկասում, պէտք է դրանց ժողովել, ապաստանել՝ Վանի մէջ տեղաւորել դրանց ու տալ վստահելի հաստատութեանց խնամքին։

Իմանալով իմ կապը Քաղաքների Միութեան հետ, խնդրեց նպաստել, որ Միութիւնը մի հիւանդանոց բանայ Վանում և բժշկական շրջիկ խմբեր ունենայ շրջակայքում։

— Չէ որ այժմ այդտեղ 10 հազարի չափ մարդիկ կան և դեռ գալու են. դրանք բոլորն էլ կարիք ունեն բժշկական օգնութեան, սնունդի, խնամքի, հագուստի. խնդրեմ օգնէք ինձ այդ բանում։

Մենք մի հեռագիր կազմեցինք Քաղաքների Միութեան լիազօրի անունով և յաջորդ օրը պատասխան եկաւ, որ միջնորդութիւնը յարգված է. Վանում բացվելու է հիւանդանոց, իսկ ճանապարհին մի շարք սննդական կայաններ։

Պ. Տէրմէնի ուրախութեանը չափ չը կար։

— Շնորհակալ եմ, ինձ օգնում են, աջակցում, և այդ բանի մէջ ես գտնում եմ իմ ոգևորութեան աղբիւրը։

Ամբողջ երեք օր յաճախ հանդիպում և զրուցում էինք պ. Տէրմէնի հետ, և մեր ստացած տպաւորութիւնը նրանից, որպէս կուլտուրական անձից և կառավարչից, վերին աստիճանի նպաստաւոր էր։ Տէրմէնը քաղաքականութեամբ չէ զբաղվում. նա, որպէս ֆրանսիացի, կուլտուրայի, առաջադիմութեան մարդ է, և ով որ կարող է նրան նպաստել այդ մտքով ու ուղիով, թող անի։ Դրանից կը շահվի միայն երկիրն ու ժողովուրդը։

Պէտք է աջակցել անվերապահ. նա նոր մարդ է և մենակ, շատ մենակ։

Ա. Աթանասեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիֆլիսում, տ. Մարիամ Կաֆեանից, ի յիշատակ Նիկողայոս Բահաթրեանի 15 ռուբ.։

ՕՐՎԱՅ ԻՄԱՍՏԸ

Ի՞նչ միտք ունեն տարելիցների յիշատակումը և հոգեհանգիստները. ինչու ենք յիշում հանգուցեալներին...

Այս հարցերին անհրաժեշտ է պատասխանել, պէտք է ցոյց տալ, որ մենք լոկ ձեւականութեան և սովորութիւնների գերիներ չենք, և հեռու ենք մեռելների պաշտամունքից...

Հոգեհանգիստը կամ տարելիցի դամբանականները լոկ արտաքին, երեւցող մակերեւոյթն են խորունկ իմաստի և գործնական օգուտի։ Յիշելով հանգուցեալներին, մենք կենդանացնում ենք նրանց կատարած գործը, հնչեցնում ենք նրանց խօսքը, գնահատութիւններ և համեմատութիւններ ենք անում. մեզ հարց ենք տալիս՝ թէ այսօր, հանգամանքների դասաւորման այս միջոցին ինչպէ՞ս կը վարվէր և ինչ կանէր այս կամ այն հին գործիչը։ Այս հարցի պատասխանը հնարաւոր է միայն որոշ մտաաշխատանքից յետոյ, երբ մենք կը պատկերացնենք մեզ հին գործչի կատարածը և նրա աշխատանքի պրոբլեմները։ Դրանից հետեւում է այն գործնական օգուտը, որ մենք կարող ենք կատարել և անսխալական դարձնել մեր ներկայ աշխատանքը, իսկ խորունկ իմաստը՝ այդ մեր ժառանգական բնազդն է, հաշւետուութեան պէտքը,... մի բան, որ դժուար է արտայայտել բառերով, բայց որը պէտք է լիուլի զգալ և գիտակցել...

Բայց երբ հոգեհանգիստներն և տարելիցները կը կրեն լոկ ձեւական բնոյթ, երբ նրանք չեն հետևցնի ինքնաքննութեան օգտաշատ գործը, այդ դէպքում բոլորովին միտք չունեն անցեալի յիշատակումները։ Մեզանից հեռու պէտք է լինի մեռելների պաշտամունքը և ֆետիշիզմը. և մօտ պէտք է լինի յաւերժ գաղափարական աշխատանքի զարգացման գործը, հների ուսմունքի և գործելաձևի էութիւնը։

Այդ կը նպաստէ մեր յետագայ աշխատանքին։ Այդ է և օրվայ իմաստը։

Գ. Զ.

ՍԽԱԼ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Շիրվանզադէն «Кавк. Слово» թերթում (հոկտ. 15-ի №-ը) մի յօդուած է տպագրել՝ «Դատեցէք, բայց մի դատապարտէք» վերնագրով։ Այդ յօդուածի մէջ նա բացատրում է իր բռնած դիրքը դէպի Հայկական Բիւրօն և կամաւորական շարժումը։ Մենք միանգամայն համաձայն չենք Շիրվանզադէի տեսակէտների հետ և այժմ նրա քաղաքական դատողութիւնների դէմ չէ, որ պիտի առարկենք։ Հայ վիպասանի յօդուածի մէջ կայ մի միտք, որ ապշեցրեց մեզ։ Այդ միտքը և՛ սխալ է հիմնովին, և՛ վարկաբեկիչ՝ հայերի համար։ Մենք պիտի առարկենք այդ մտքի դէմ և համոզված ենք, որ հեղինակը պիտի հրաժարվի նրանից կամ թէ այլ կերպ պիտի բացատրէ նրա բովանդակութիւնը։

Շիրվանզադէն գրում է՝ «որը (այսինքն հայ ժողովուրդը—Դ. Ա.) քիչ չէ նպաստել Թիւրքիայի բարոյական և ֆիզիքական կործանման»։ Ի՞նչ, ուրեմն ճիշդ չէ՞ վաղեմի պարզ երգի այն պնդումը, թէ Թիւրքերը
Հայի ջանքով, աշխատանքով
Պետութիւն պահպանեցին։

Մի՞թէ հայերը չեն եղել, որ անվերջ գրել են և բոլոր ամբիոններից ճառել, թէ իրանք Թիւրքիայի արտադրող կուլտուրական տարրն են, թէ իրանց ուսերի վրա է ծանրանում պետութեան նիւթականի հոգսը, թէ անգամ իրանք են առաջնորդում տիրող ցեղին դէպի եւրոպականացում, թէ հայկական յեղափոխական շարժումները նպատակ ունէին վերանորոգել Թիւրքիան և այլն և այլն։ Մի՞թէ այս պնդումները ճշմարտութիւն չեն եղել, այլ ճշմարիտ է այն, ինչ այսօր ասում է Շիրվանզադէն, թէ հայերը «քիչ չեն նպաստել Թիւրքիայի բարոյական և ֆիզիքական կործանման»։ Դա մի սարսափելի վկայութիւն է հայերի համար։ Մենք իրաւամբ մեր բարոյական ախտերը բացատրել ենք թիւրքական տիրապետութեան գոյութեամբ, բայց հիմա դուրս է գալիս, որ ոչ թէ թիւրքական կարգերն են նեխել մեր հասարակական կեանքը, այլ մենք ենք փտախտ դարձել Թիւրքիայի համար։ Չէ, Շիրվանզադէն պիտի հրաժարվի իր մտքից, նրա հեղինակաւորութիւնը չը պիտի գայ արատաւոր վկայագիր տալու հայ տառապեալ ազգութեան։ Եթէ հայերը իրօք ունենան Շիրվանզադէի վկայած յատկութիւնները, ո՞ր պետութիւն, ո՞ր ազգ կը կամենայ այդ նեխիչներին իրան քաղաքացի կամ հարեւան ունենալ։

Բայց բարեբաղդաբար հայերը ազատ են այդ արատից և եթէ նրանք որեւէ արատ ունեն, ապա դա ներմուծված է թիւրքական կարգերի շնորհիւ։ Եթէ այսօր ռուս առաջաւոր մտքի ներկայացուցիչներն իրանց ազգի յետամնացութիւնը բացատրում են մի ժամանակի թաթարական լծի գոյութեամբ, ապա մենք չենք, այսօր էլ այդ լծի տակ ողջակիզվողներս, որ ասենք, թէ մենք՝ զոհ լինելու փոխարէն՝ մեր չար նպատակներին զոհ ենք դարձրել Թիւրքիան։ Ո՛չ, դա հայի խօսք չի կարող լինել։

Եթէ Շիրվանզադէն իր մտքին տալիս է այնպիսի բովանդակութիւն, թէ հայկական արտասահմանեան պրոպագանդան մի չափով վարկաբեկ է արել Թիւրքիայի ռէժիմը, ապա դրա հետ կարելի է հաշտվել, բայց դա կապ չունի այդ պետութեան բարոյական կործանման հետ։ Ինչ վերաբերում է Թիւրքիայի ֆիզիքական կործանման, պիտի ասել, որ նա դեռ ամուր կանգնած է իր ոտքերի վրա և յամենայն դէպս հայերը անցեալում չեն ձգտել խորտակել նրա պետական մարմինը, այլ նոր և բարձր իմաստ ներարկել այդ մարմնին։ Այստեղ էլ, կրկնում ենք, Շիրվանզադէն մեղանչում է պատմական ճշմարտութեան դէմ և անգիտակցաբար հայերին յատկացնում է ցեցի բնաւորութիւն, մի բան, որ հեռու է եղել հայերից և պատիւ չի կարող բերել հայերին։

Զարմանալի՜ բան։ 11 տարի առաջ այս նոյն հարցը քննվում էր Անդրկովկասի հայ և ռուս մամուլի էջերում և այն ժամանակ երկու թիւրքահայ (Տիգրան Զաւէն և դոկտոր Կարապետ Փաշայեան) եկան «Մշակի» էջերում ապացուցանելու այն խոշոր պետական և մտաւոր - բարոյական ծառայութիւնը, որ հայերը մատուցել են

Թիւրքիային և Թիւրքերին։ Այն ժամանակ, 1904 թ., այս խնդրի քննութիւնն ու պարզաբանումը ծագեց հետևեալ կերպով։ «Մշակի» մէջ տպագրվեցին դրամաշորթ սրիկաների ձեռքով նահատակված Արփիար Արփիարեանի յօդուածները, որոնց մէջ նա քննութեան էր առնում հայ-թիւրքական յարաբերութիւնները։ Այդ յօդուածները նիւթ ծառայեցին տողերիս գրողի համար մի յօդուած զետեղելու «Каспій» թերթում։ Մենք հանդէս էինք բերում հայերի կատարած խոշոր դերը Թիւրք պետութեան մէջ և անհրաժեշտ էինք գտնում երկրի վերածնութեան համար հայ և թիւրք առաջաւոր տարրերի համերաշխութիւնն ու գործակցութիւնը։ «Каспій»-ի աշխատակից, յայտնի Թուրք գիտնական Ալի-բէկ Հիւսէյին զադէն, որը այժմ Կ. Պոլսում Ահմէդ-բէկ Աղայեվի հետ խոշոր դեր է խաղում երիտասարդ-թիւրքերի մէջ, յատուկ յօդուած նուիրեց մեր յարուցած խնդրին, աւելացնելով որ հայերի դերը բացասական է եղել Թիւրքերի հոգեոր-բարոյական կեանքի մէջ, որ հայերը կերակրել են Թիւրքերին պարիզեան թեթև և պոռնկագրական վէպերով և այլն։ Ալի-բէկ Հիւսէյին-զադէի հետ օրտեղից-օրտեղ եկաւ համերաշխելու նաև հանգուցեալ Կարապետ Եզդուբեանը, որ վարում էր «Бак. Изв.» թերթի հայկական բաժինը։ Սակայն, ինչպէս ասացինք, հրապարակ եկան բուն թիւրքահայ մտաւորականներ՝ Տիգրան Զաւէնը և դոկտ. Կարապետ Փաշայեանը և ապացուցեցին, որ Հիւսէյին-զադէն գիտակցաբար թէ անգիտակցաբար չի խոստովանում հայերի կատարած բարիքը, իսկ «Бак. Изв.» թերթը միանգամայն սխալվում է համերաշխելով նրա հետ (տես «Մշակ» 1904 թ. № № 153 և 221)։ Այստեղ մենք առաջ ենք բերում Տ. Զաւէնի յօդուածից մի հատուած, թէ ինչ դեր են խաղացել հայերը Թիւրքերի հոգեւոր կեանքում, և թող Շիրվանզադէն վկայէ այնուհետև, թէ հնարաւո՞ր է հայերի համար ասել, որ նրանք նպաստել են Թիւրքիայի բարոյական կործանման։ «Հայը,—գրում է Զաւէնը («Մշակ», 1904 թ. № 153),—Թիւրք մտքի վրա ներգործել է իբրև ուսուցիչ, պրոֆէսոր Թիւրք բարձրագոյն դպրոցներում, իբրև թարգմանիչ, հրատարակիչ, հրապարակախօս՝ Թիւրք գրականութեան և մամուլի վրա։ Հայը ազդել է Թիւրք իմացականութեան և ճաշակի վրա նաև իբրև դերասան։ Մնակեան, Զափրաստճեան իրանց խմբով՝ մինչև այսօր էլ տարածում են Կ. Պոլսի Թիւրք հասարակութեան մէջ թատերական գրականութեան և գեղարուեստի բարիքները։ Թիւրքիայի մայրաքաղաքի Թիւրք գրավաճառների մեծ մասը հայեր են, մանաւանդ կեսարացի հայեր, որոնք իրանց մայրենի լեզուից աւելի Թիւրք լեզուին ծանօթ՝ իրանց հրատարակած գրքերով, լոյս ընծայած գրական և գիտական հանդէսներով ահագին ծառայութիւն են մատուցանում Թիւրք գրականութեան։ Ապա Տ. Զաւէնը յիշատակում է, որ Թիւրք հռչակված «Սաբահ» թերթի հրատարակիչը հայ Միհրան էֆ. Նազարեանն է, իսկ նրա գլխաւոր և տաղանդաւոր աշխատակից Տիրան էֆ. Քէլէկեանը։

Ո՞վ է ուրեմն ճշմարիտ, Տ. Զաւէնը թէ Շիրվանզադէն։ Հարկաւ առաջինը։ Եթէ Շիրվանզադէն Տ. Զաւէնի ասածներին աւելացնէ և այն, թէ ինչ դեր են խաղացել հայ ամիրաները, հայ քաղաքագէտները (Տիւզեան, Պէզճեան, Պալեան, Տատեան, Նորատունկեան և այլն) Թիւրք պետական կեանքի բարգաւաճման և պահպանման մէջ, ապա նա չէր ասի, թէ հայերը կործանողներ են եղել։ Ո՛չ, հայը միշտ և ամենուրեք շինարար է եղել, և մեղքը նրանը չէ, որ ինքը չի գնահատվել, որ հալածվել է ու կողոպտվել։ Բողոքել կողոպտիչների դէմ՝ չի նշանակում բարոյական նախինչ լինել։ Յամենայն դէպս հայը չէ, որ այդ մասին խօսք պէտք բանայ և այն համարէ բարձր առաքինութիւն։

Այո, Շիրվանզադէն այս պարագայում սխալ վկայող է հայերի համար։

Բագու Դ. Անանուն

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Նոր-Բայազէտ, 21 հոկտ.

Անցեալ Երևան-Ելենովկայի խճուղու գծի վրա Քաղաքների Միութեան հիմնած սննդական կայանները և հիւանդանոցային հաստատութիւնները, որոնք գործում են գաղթականների համար։ Սննդի գործը դրված է շատ լաւ՝ ճանապարհներին. սակայն հէնց որ գաղթականները ցրվում են գիւղերում՝ դրութիւնը դառնում է յուսահատական. շաբաթներով ալիւր ու նպաստ չեն ստանում և ակամայից ընկած են մեր խեղճ գիւղացիութեան վզին։ Այս հողի վրա ծագում են անցանկալի բարդութիւններ։ Նոր-Բայազէտի գաւառում, որի 56 գիւղերում տեղաւորված են 11,000 գաղթականներ, կան գիւղեր, ուր փախստական հայերն ալիւր ու փող չեն ստացել սկսած սեպտ. 22-ից։ Քաղցը շարան-շարան բերում է նրանց Նոր-Բայազէտ։ Այդ մասին եղել են մի շարք դիմումներ։ Ալիւր չը կար, գները բարձրացել են և հասել պուդը 3 ռ. 20 կոպէկի։ Այսօր միայն վերադարձաւ Երևանից յաջորդ Ռուբէն վարդապետը և հետը բերեց սննդադրամ ընդամենը մի քանի օրվայ։

Ուղևորվում եմ Դիլիջանի գծով՝ դիտելու նոր ծայր առած գաղթականութեան երթին դէպի Գանձակի նահանգ։

Ա. Աթանասեան

—

Թիֆլիսում, ինչպէս հաղորդում են մեզ, կազմվել է աչքի ընկնող անձերից մի առանձին յանձնաժողով «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողով» անունով, որ նպատակ ունի նպաստել Վանի, Վասպուրականի և այլ տեղերի վերաշինութեան գործին, որքան կը ներեն միջոցները։ Յանձնաժողովը նպաստելու է և Վանի հայկական մելիցիայի պահպանման։

—

Նիւ-Եօրկից գրված մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ ամերիկացի միլիարդէր Ռօքֆէլլէրի հիմնած բարեգործական ֆօնդի վարիչները խոստացել են Հայաստանի կարօտեալների վիճակը նկատողութեան առնել և, եթէ կարելի լինի, յատուկ մի յանձնախումբ ուղարկել՝ օգնութիւն բաշխելու։

—

Հաղորդում են, որ Սուրմալուի գաւառից հայրենիք են վերադարձել 5000 փախստական հայեր։ Նրանց մի մասը մնացել է Բայազէտի շրջանում։ Ներկայումս Բայազէտի շրջանում կան մօտ 5000 փախստականներ։

—

Բայազէտում կահաւորված է և սկսել է գործել մի հիւանդանոց փախստականների համար։ Քաղաքների Միութեան սննդական կայանները գործում են կանոնաւոր ընթացքով։

—

Գանձակի նահանգի Գետաբէկ գիւղում կահաւորված է և սկսել է գործել լուացարան փախստականների համար։

ՍԱՐԳԻՍ ԵՊ. ՓԻԼՈՅԵԱՆ

(Կենսագրական թռուցիկ գծեր)

—

Կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ՝ հոկտ. 12-ի երեկոյեան կնքեց իր մահկանացուն Սևանի մենաստանի բազմավաստակ վանահայր Սարգիս եպ. Փիլոյեանը։ Հանգուցեալը բնիկ Նոր-Բայազէտցի էր, ծնվել է 1852 թ. յունվ. 25-ին։ Նոր-Բայազէտի դպրոցն աւարտելուց յետոյ, Թեմ. դպրոցի քննութիւն է տուել և 1870 թ. 18 տարեկան հասակում կարգվել է ուսուցիչ։ 21 տարեկան՝ նա չորս աստիճան է ստացել։ Ուսուցչութեան 25 տարին լրանալու առիթով 1895 թ. Նոր-Բայազէտի երկսեռ ուսումնարանում հանդէս է կատարվել, ուր հանգուցեալը ստացել է ընծաներ՝ ուսումնարանի կողմից ոսկի ժամացոյց, իսկ ուսուցչական խմբից՝ արծաթեայ ոսկեզօծ գրիչ և մատիտ, որոնք, ըստ որոշման վանական կառավարութեան, մնալու են վանքի թանգարանում։ Ապա հանգուցեալը հրաւիրվել է Սևանի միաբանութեան կողմից վանահայր և գալով վանք՝ 1895 թ. հոկտ. 1-ին ձեռնադրվել է աբեղայ. շուտով ստացել է և վարդապետական աստիճան, իսկ 1896 թ. ապրիլի 11-ին Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով հաստատվել է մենաստանի վանահայրութեան պաշտօնում, որը և վարել է 20 տարի։ 20 տարվայ ընթացքում հանգուցեալը շինել է մի շարք փառաւոր շինութիւններ, որոնք են՝ վանքի զանգակատունը, դպրոցական շէնքը, միաբանութեան և վանահօր բնակարանները, ուխտաւորների համար մի մեծ շէնք, սեղանատուն, տնտեսատուն, մառանատուն և այլն, և այլն, միով բանիւ վանքի բակում չը կայ ոչ մէկ շինութիւն, որը Սարգիս եպ.-ի շինածը չը լինի. նմանապէս բաւական մեծ ուշադրութիւն է դարձրել և դրսի կալուածքներին։

Յիշեալ բոլոր շինութիւնների համար ծախսված մօտաւորապէս 50,000 ռ. գումարի մեծ մասը հանգուցեալը ձեռք է բերել դիմելով Թիֆլիսի ու Բագուի հարուստներին, որոնց թւում առաջին տեղն են բռնում յայտնի բարերար Ղուկասեանը և Բուդաղեանը։ Հանգուցեալը հիմնել է վանքում նաև շատ հետաքրքրական թանգարան, բաւական հարուստ գրադարան և ընթերցարան։ Ունի և գրական աշխատութիւններ, որոնք են՝ «Կորած մարգարիտ», «Զրոյցներ բնական պատմութիւնից» (թարգմանութիւն), «Սափերք», «Սևանի պատմութիւն», որը այժմ Թիֆլիսում տպվում է։ Եւ այսպէս՝ հանգուցեալ Սարգիս եպ. Փիլոյեանը թէ Սևանի մենաստանում և թէ ամբողջ Նոր-Բայազէտի շրջանում թողեց անջնջելի յիշատակ։

Տեսնելով հանգուցեալի եռանդուն գործունէութիւնը՝ Մկրտիչ կաթողիկոսը, որպէս վարձատրութիւն, 1901 թ. մայիսի 13-ին տալիս է նրան եպիսկոպոսական աստիճան։ Սարգիս եպ. Փիլոյեանը վախճանվեց 63 տարեկան հասակում։

Թաղումը կայացաւ ուրբաթ, հոկտ. 16-ին։ Ցաւակցական հեռագիրներ ստացվեցին՝ Վեհափառ Հայրապետից, մենաստանիս նոր վանահայր Խորէն եպ.-ից, Նոր-Բայազէտի քաղաքագլխից։ Պատգամաւորներ կային Նոր-Բայազէտի քաղաքի կողմից, նոյն քաղաքի ուսումն. հոգաբարձութեան կողմից և շրջակայ գիւղերից։

Եղիշէ վարդապետ

Սևան

ԿԱԴԵՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

«Рус. Сл.»-ն հաղորդում է, որ հոկտ. 17-ին Մոսկվայում տեղի ունեցաւ տեղական կադէտների ժողովը Պետրօգրադից եկած Պ. Ն. Միլիւկովի մասնակցութեամբ։

Պ. Ն. Միլիւկով զեկուցեց Պետ. Դումայի կադէտների ֆրակցիայի տակտիկայի մասին, նրա՝ բլոկին մասնակցելու և յանձնաժողովների մէջ կադէտ պատգամաւորների ունեցած աշխատանքների մասին։

Պ. Ն. Միլիւկով մատնանշեց, որ լսվում են բողոքի առանձին ձայներ այս ամենի դէմ, բայց մեծամասնութիւնը գտնում է, որ դրութիւնը փոխելը անյարմար է մինչև Պետ. Դումայի գումարումը։

Միլիւկովի կարծիքով բլոկը օգտակար է։ Շնորհիւ բլոկի Պետ. Խորհուրդ անցան մի քանի առաջադէմ գործիչներ։ Իսկ այդ հնարաւորութիւն է տալիս Պետ. Խորհրդով անց կացնել եկամտային հարկի օրինագիծը։

— Բլոկը,—ասել է Միլիւկով,—կազմված է, ի հարկէ, պատերազմի ժամանակի համար, բայց ես պէտք է ընդգծեմ, որ նա մեզ սովորեցնում է միութեան։ Բլոկը ժողովրդական կուսակցութեան համար ոչինչ վատ բան չէ արել։

Միլիւկովի տեսակէտը պաշտպանեցին իշխ. Դ. Ի. Շախովսկին, Ն. Մ. Կիշկինը և ուրիշներ։

«Բլոկիստների» դէմ դուրս եկան Մ. Լ. Մանդելշտամ և Վ. Պ. Օբնինսկի։

— Բլոկը կատարել է իր դերը,—ասել է Մ. Լ. Մանդելշտամը։—Բլոկի նպատակը՝ ցոյց տալ, որ զիջումներ չեն ցանկանում, իրագործվել է։ Կադէտները պէտք է դուրս գան բլոկից, եթէ չեն ցանկանում խայտառակել կուսակցութիւնը։ Ես պնդում եմ, որ կադէտները և ձախակողմեանները անում են մի գործ՝ այդ է կեանքի բլոկը։ Ուրեմն անցողակի բլոկներով մի քանդէք պատմական գործը։

Վերջում Միլիւկովը համառօտ զեկուցում արաւ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ, որի ժամանակ ընդգծեց մեր դիպլոմատիայի Բալկաններում արած, նրա կարծիքով, էական սխալները։

Ա. Ա. Կիզեվետտերը յանդիմանեց «Рѣчь»-ի ղեկավարներին կուսակցական դիսցիպլինան խախտելու համար։ Խախտումը, ճառախօսի կարծիքով, արտայայտվել է լրագրի այն տեսակէտի մէջ, որ նա ունեցել է զինուորական ցենզուրայի մասին։

Միլիւկովը բողոքեց այդ մեղադրանքի դէմ։

ԲԱՆԿԵՏ ՀՈԿՏ. 17-Ի ՄԱՆԻՖԵՍՏԻ ՊԱՏԻՒՆ ՊԵՏՐՕԳՐԱԴՈՒՄ

—

Հոկտ. 17-ի երեկոյեան հասարակական գործիչների ակումբում եղաւ բանկէտ. նուիրված հոկտ. 17-ի մանիֆէստին։ Հաւաքվել էր մօտ 150 մարդ։ Բանկէտը բացեց Ն. Ի. Անտօնովը մի բաժակաճառով նուիրված հոկտ. 17-ի մանիֆէստը տուող Թագաւոր Կայսրի անուան։ Արտասանվել են մի քանի ճառեր։ «Рус. Сл.»-ի ասելով՝ տիրապետող է եղել ճնշված տրամադրութիւնը։ Մ. Ա. Կարաուլովը ասել է. «Մենք կարծես ներկայ ենք ոչ թէ յօբելեանի, այլ հոկտ. 17-ի մեծ ակտի յիշատակի սգահանդէսին»։

Վ. Ի. Գուրկօն համաձայն չէ Կարաուլովի վատատեսութեան հետ։ Հոկտ. 17-ի մանիֆէստը, իրօք, իրագործված չէ, սակայն նրա սկզբունքները կենդանի են մինչև այժմ։ Դրանում մենակ կառավարութիւնը չէ մեղաւոր։ Մեղաւոր են ամբողջ հասարակութիւնը և նրա ներկայացուցիչները։

Մենք ինքներս մինչև այժմ ցրված էինք առաջ գնում, և միայն այժմ, պատերազմի ազդեցութեամբ, հրաշք կատարվեց. քաղաքական տարբեր ձգտումների տէր մարդիկ միացան ընդհանուր քաղաքական սկզբունքի շուրջը։

Վ. Վ. Կրուպենսկի բաժակաճառ է ասել զօրքի պատուին, իսկ Ի. Ի. Դիմիտրիւկովի առաջարկութեամբ, որոշվել է ամենահպատակ հեռագիր ուղարկել Թագաւոր Կայսրին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ «Рѣчь»-ի ասելով, առաջիկայ տարի խոշոր բարենորոգումներ պէտք է տեղի ունենան Կովկասի փոխարքայական կառավարութեան մէջ։ Փոխարքայի դիւանատունը նշանաւոր չափով պէտք է ընդարձակվի. նրան կից պէտք է հաստատվի դիպլոմատիական առանձին բաժանմունք, նաև առանձին պաշտօններ պէտք է սահմանվեն լեռնական ցեղերին կառավարելու վերաբերմամբ։ Բարենորոգված դիւանատան օրինակ վերցված է փոխարքայութեան բարձրագոյն կառավարութեան այն հրահանգը, որ գոյութիւն ունէր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի օրով։

◆ Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով և ոսկէ սրերով պարգևատրվել են հետևեալ հայ զօրականները. կապիտաններ՝ Տէր-Սիմէօնեան և Մելիք-Շահնազարեան, Ստանիսլավի 2-րդ աստիճանով՝ կապիտան Ղարաքէշիշեան, Աննայի 3-րդ աստիճանով՝ կապիտան Փիրադեան, շտաբս-կապիտան Սեդրակեան, պրապօրշչիկ Լեւոն Խարադեան, պօդպօրուչիկներ Ստեփաննոս Մուրուզեան, Խաչատուր Աղաջանեան և Հմայեակ Ղոնդաղեան. Աննայի 4 րդ աստիճանով՝ պօդպօրուչիկ Դիոնեսիոս Խաչատրեան, պրապօրշչիկներ Աշոտ Նասիբեան, Սուրէն Արղանեան-Ղահրամանեան, Վասիլ Մանթեան, Արշաւիր Պօպօնց, Տիգրան Տէր-Աւետիքեան, Արայ Բաղրամեան, Մեսրոպ Մարանջեան, Դաւիթ Մելիքեան, Յովսէփ Փարաջանեան և Արգար Շահմուրադեան. Ստանիսլաւի 3-րդ աստիճանով՝ պրապօրշչիկ Յովհաննէս Մելիք-Մարտիրոսեան։

◆ Քաղ. դումայի երկուշաբթի օրվայ հերթական նիստում զեկուցում է լինելու մթերքները քաղաք մատակարարելու գործը կանոնաւորելու։

◆ Նովօրօսիյսկի մասնաւոր նաւատորմի գործակալը հարցրել է քաղ. վարչութեան, թէ ինչ քանակութեամբ ալիւր է հարկաւոր Թիֆլիսին, որ իրանք կարող են բերել։ Նրա ասելով, ալիւրը Նովօրօսիյսկից Անդրկովկաս կուղարկվի Փօթիով կամ Բաթումով։

◆ Նահանգապետ Սարախովսկին օրէնքի որոշ կէտերի հիման վրա առաջարկել է կանգնեցնել քաղ. դումայի սեպտ. 28-ի որոշումը՝ դումայի իրաւասուներ ընտրելու վերաբերմամբ, առաջիկայ քառամեակի համար։

◆ Այս օրերս Բագուից կը վերադառնայ ժուռնալիստ Վ. Վ. Վօդովօզով և Հասարակական ակումբի հրաւէրով Երաժշտական դպրոցի դահլիճում, հոկտ. 31-ին, կը կարդայ մի դասախօսութիւն Պուշկինի հասարակական գաղափարների մասին։ Դասախօսութիւնից յետոյ կը լինի զրոյց։

◆ Հոկտեմ. 23-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 5 վագօն, գետնախնձոր 1 վ., ընդեղէն 5 վ., պանիր 1 վ., միրգ 1 վ., վառելափայտ 1 վ., նաւթ 9 վ. և մազութ 13 վ.։

◆ Հոկտեմբերի 23-ին № 40 լազարէթում կային խոլերայով հիւանդ 49 հոգի. նոյն օրը հիւանդանոց բերվեցին 2 հոգի խոլերայով կասկածելի. մեռաւ 1-ը, առողջացաւ 1-ը։ Հոկտ. 24-ի առաւօտեան հիւանդանոցում կային 47 հիւանդ, որոնցից 18-ը զօրականներ են։

◆ Երէկ Բաթումից վերադարձան քաղաքագլուխ Ալ. Խատիսեան և քաղ. վարչութեան անդամ Գ. Դ. Ժուրուլի։

◆ Քաղ. առևտրա-տնտեսական գործակալները Սամանեայա փողոցում գտան պահված 1500 հատ ձու, որը հէնց նոյն տեղը սակադնով վաճառեցին ազգաբնակութեան։

—

ԿՈՎԿԱՍ

◆ «А. Л.»-ը հաղորդում է, որ մօտիկ ապագայում Աստրախանի հայկական կոմիտէտը Կովկաս է ուղարկելու տաք իրեր ու կենսական մթերքներ հայ-փախստականների համար։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Н. В.»-ն տուգանվեց 3000 ռ. «Ով է պատրաստում մեր թղթադրամները» յօդուածի համար։

◆ Խօսվում է մինիստրական փոփոխութիւնների մասին։ Պրեմիէր դառնալու է իբր թէ Խվօստովը։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թոյլատրել է Իւրեւի համալսարանի բժշկական, մաթեմատիկական և լեզուաբանական ֆակուլտէտներն ընդունել կանանց։

◆ Գօրեմըկինին կանցլէր և կոմս նշանակելու լուրերը ճշտվում են։

◆ Նիժնի Նովգորոդը վճռել է, չը սպասելով պատերազմի վախճանին, բանալ սեփական պոլիտեխնիկում։ Քաղաքը, զեմստվօն և մասնաւոր անձինք նուիրում են մօտ երկու միլիոն ռուբլի։

◆ «Петр. Курьеръ»-ը ենթարկվել է 3000 ռ. տուգանքի Նորօվիչի բաց նամակի համար, որ ուղղված է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովին Ցարսկոե Սէլօում ցոյց է տրվել ողորմած վերաբերմունք։ Այնպէս որ նրան պաշտօնանկ անելու լուրերը կորցնում են այժմ իրանց ույժը։ Սազօնովը կը մնայ իր պաշտօնում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Ուրբաթ, հոկտ. 23-ին, տեղի ունեցաւ Տ. Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնի սեզօնային բացումը։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան երեկոյթը բանալով յայտնեց, որ այս տարի լրանում է Սալօնի գոյութեան 10-ամեակը, և մի քանի խօսքով ընդգծելով Սալօնի դերն ու նշանակութիւնը, նրա կատարած գործերը և առաջ բերած մտաւոր շարժումը՝ առաջարկեց հանդիսականներին ոտքի կանգնելով շնորհակալութիւն յայտնել Սալօնի տէր և հիմնադիր Տ. Նազարեանին։ Շնորհակալութիւն յայտնել նաև այն առիթով, որ նա Թիֆլիս հասած հայաստանցի բեկորների համար իր ժամանակին հիմնեց ճաշարան և այժմ էլ հիմք է դրել ձմեռային մի ապաստարանի, որտեղ պէտք է տեղաւորվեն մեծ թւով փախստականներ և որի համար Տ. Նազարեանը նիւթական ահագին ծախսեր է անում։

Հանդիսականներն օվացիա արին Տ. Նազարեանին։

Դրանից յետոյ բժշկապետը ցանկութիւն յայտնեց, որ Սալօնը այսուհետև ունենայ գործունէութեան մի որոշ ծրագիր, որի մշակութեան համար առաջարկեց ընտրել մի յանձնաժողով։ Բայց նախ քան ընտրութեան անցնելը, նախագահի առաջարկութեամբ, ծրագրի ձևի մասին եղաւ մտքերի փոխանակութիւն։

Արտայայտվեցին զանազան թէր և դէմ կարծիքներ։ Ոմանք ցանկացան, որ Սալօնը պահպանի իր գործունէութեան նախկին եղանակը, գրական-գեղագիտական բնոյթը, ոմանք էլ առաջարկեցին, որ Սալօնն իր գործունէութեան տեսական եղանակից անցնի գործնականի, այն է՝ մեր կեանքի տարբեր երևոյթների, մանաւորապէս հայկական ներկայ աղէտի պատճառների անաչառ և ողջմիտ քննադատութեան։

Վերջին առաջարկը արաւ պ. Հ. Առաքելեանը։

Այս առաջարկի դէմ խօսեցին պ. պ. Գ. Իփէկեան, Բենիկ վարդապետ, Շէրենց և ուրիշներ, գտնելով որ քննադատութիւնը կարող է վնասել մեր գործին և պառակտում առաջ բերել ժողովրդի մէջ։

Պ. Հ. Առաքելեանի առաջարկը պաշտպանեցին պ. պ. Սեդրակ Թառայեան, պրոֆ. Մինասեան և այլք, համարելով որ քննադատութիւնը անհրաժեշտ է ամեն մի հասարակական կեանքի համար և որ քննադատութիւնից վախենում են այն ազգերն ու մարդիկ, որոնք յետամնաց են և զուրկ կենսունակութիւնից։

Հարցի շուրջը խօսեցին նաև պ. պ. Աւ. Եզեկեան, Ե. Սօլովեան և ուրիշները, որից յետոյ մի քանի երգիչներ երգեցին ռուսերէն երգեր դաշնամուրի նուագակցութեամբ։

Վերջում Հ. Առաքելեան պատասխանեց իր օպօնենտներին, որից յետոյ ժողովը անցաւ յանձնաժողովի ընտրութեան։

Ընտրվեցին՝ Տ. Նազարեան, բժշկ. պ. Բ. Նաւասարդեան, Յովհ. Ակունեան, Աւ. Եզեկեան, Հ. Առաքելեան, Ե. Սօլովեան, բժ. Արծրունի, բժ. Արտ. Շխեան, Աշոտ Աթանասեան, Սեդրակ Թառայեան, Ռ. Խան-Ազատ, Ա. Նազարէթեան, տ. Ե. Սպէնդիարեան, տ. Հ. Մարտիրոսեան, Ե. Մալխասեան, Բենիկ վարդապետ, Յովհ. Սպէնդիարեան, Եր. Լալայեան, պրոֆ. Մինասեան և Շաւարշ Հովիւեան։

Սրանցից հրաժարվեցին զբաղված լինելու պատճառով՝ բժշկ. Նաւասարդեան և Ե. Լալայեան։

Մոռացանք յիշել, որ նախագահի առաջարկութեամբ ոտքի կանգնելով համակրութիւն յայտնվեց ներկայ եղող վանեցիներին։ Ս. Ր.

ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Մոսկվա, 16 հոկտ.

Ամսիս 15-ի երեկոյեան «Альпійская Роща» ռեստօրանի սրահներից մէկում կայացաւ ռուս գրողների «Свободная Эстетика» անուն ընկերութեան այս սէզոնի առաջին նիստը, որը ամբողջովին նուիրված էր հայ բանաստեղծութեանը։ Բացի ընկերութեան անդամներից՝ նիստին ներկայ էր նաև ռուս և հայ մտաւորականների մի երկսեռ բազմութիւն։ Ամենից առաջ խօսեց բանաստեղծ Վ. Ե. Բրիւսովը մեր հին և նոր բանաստեղծութեան մասին առ հասարակ. Նրա զեկուցման ամփոփումը մօտաւորապէս հետևեալն է։

Հայ գրականութիւնը ռուսներին շատ քիչ է ծանօթ. հայերէն կարդացողներ շատ քիչ կան, իսկ ռուսերէն լեզուով մինչև այժմ հրատարակված սակաւաթիւ թարգմանութիւններն այդ գրականութեան մասին մեզ գաղափար տալուց շատ հեռու են։ Ռուսերէն լեզուով աւելի շատ համակրական յօդուածներ են գրվել հայերի մասին։

Հայ ժողովուրդը մի պատուաւոր տեղ է գրաւում հրեաների և միւս հին ազգերի շարքում. անցեալում դարեր շարունակ նա ապրել է կուլտուրական կեանքով և միշտ շփման մէջ է եղել ժամանակակից քաղաքակիրթ ազգերի հետ։ Լեզուի, գրականութեան, սովորութիւնների և ճաշակի կողմից նրա վրա շատ են ազդել և՛ պարսիկները, և՛ յոյները, և՛ հռոմէացիք, և՛ արաբները, բայց այդ ազդեցութիւնները կրելով հանդերձ հայ ժողովուրդը միշտ պաշտպանել է իր ինքնուրոյն ոգին։ Նոյն իսկ ընդունելով քրիստոնէական կրօնը՝ նրան իրայատուկ բնոյթ է տուել, հայացրել է։

Հայկական բանաստեղծութեան մէջ ցայտուն կերպով երևան է գալիս այդ ինքնուրոյն ոգին։ Դեռ Քրիստոսից առաջ հայերը ունեցել են բազմաթիւ կրօնական և դիւցազնական ժողովրդական երգեր, դրանցից գեղեցիկ նմոյշներ հասել են այսօր մեր ձեռքը. մեզ համար ամենից հետաքրքրականը, սակայն, նրանց միջնադարեան աշխարհիկ բանաստեղծութիւնն է։ Ինչպէս հայկական կեանքում առ հասարակ, այնպէս և այդ երգերի մէջ Եւրոպան և Ասիան միացած են հանդէս գալիս. աչքի է ընկնում արևական ոգին. վառ երևակայութիւն, փայլուն գոյներ, բուռն և անզուսպ կրքեր—արևելեան երգի այս բոլոր յատկութիւններն ունի հայ բանաստեղծութիւնը. միաժամանակ նա պահպանում է ներդաշնակութիւն աւանդը, մի բան, որը յատուկ է Արևմուտքին։

Հայ միջնադարեան աշխարհիկ բանաստեղծութիւնը սկսեց զարգանալ 10-րդ դարից յետոյ. նա ծաղկեց յատկապէս Կիլիկիայում, որտեղ հայ թագաւորների հովանու տակ գիտութիւնն ու գեղարուեստը ծաղկում էին առ հասարակ։ Երգիչների մեծ մասը հոգևորականներ (երբեմն և կաթողիկոսներ) էին, բայց նրանց երգերը շատ յաճախ աշխարհիկ բնոյթ ունէին։

Այստեղ Բրիւսովը միջանկեալ ցաւ յայտնեց, որ հայ միջնադարեան բանաստեղծները շատ քիչ են ուսումնասիրվել և գնահատվել իրանց, հայերի կողմից. այդ ուղղութեամբ աշխատանք է կատարված մեծ մասամբ վերջին 10-ամեակում միայն. այն ինչ՝ այդ բանաստեղծները մեծ պատիւ կը բերէին ամեն մի ազգի համար: Ուսումնասիրութեան կարօտ դեռ շատ նիւթ կայ գրադարանների անկիւններում և այլուր:

Յետոյ զեկուցանողը թռուցիկ կերպով բնորոշեց Նահապետ Քուչակին, Յովհ. Թլկուրանցուն, Գր. Աղթամարցուն. խօսեց աշուղների մասին և յատկապէս կանգ առաւ 16-րդ դարի երգիչ Սայաթ-Նովայի վրա. վերջինս թէև իր գրելու ձևը փոխ է առել պարսիկներից, բայց իր արտայայտութիւնների և դարձուածքների մէջ այնպիսի մի ինքնուրոյնութիւն և բազմազանութիւն է հանդէս բերում, որ ռուս բանաստեղծները նրա ստանաւորները թարգմանելիս ուղղակի հիացել են:

Բրիւսովը համեմատաբար քիչ խօսեց մեր նոր գրականութեան մասին, թւեց մեր մի քանի ռուսահայ և թիւրքահայ գրողների անունները, բայց առանձին կանգ չառաւ նրանցից ոչ մէկի վրա. ասաց միայն, որ ռուսահայ բանաստեղծները աւելի մօտ են եղել հայ ժողովրդին և աւելի են պահպանել հայ ոգին, այն ինչ թիւրքահայ գրողները ենթարկվել են արևմտեան ազդեցութիւնների:

Ռուս բանաստեղծը իր զեկուցումը վերջացրեց այս խօսքերով. «Երբ ես մի քանի ամիս առաջ պատահաբար, առանց կանխակալ կարծիքների մօտեցայ հայ գրականութեանը և սկսեցի ուսումնասիրել, անսպասելիօրէն մեծ հարստութիւն և ինքնուրոյնութիւն գտայ այնտեղ: Հայ գրականութիւնը ռուսներիս համար մի նոր գեղարուեստական աշխարհ է, որը մեզ այնքան մօտիկ լինելով հանդերձ՝ ինչքան անծանօթ է: Ռուս գրողներս ձեռնարկելով մի շարք թարգմանութեանց՝ մեր հասարակութեանը մի փոքր գաղափար տալ կուզէինք այդ գրականութեան մասին: Հայ ժողովուրդն արժանի է ամենալուրջ ուշադրութեան. նա ունի մի կուլտուրական՝ անցեալ և ներկայ. իրաւունք ունի սպասելու մի լուսաւոր ապագայի»:

Զեկուցումից յետոյ ռուս բանաստեղծներից՝ Բրիւսով, Իւ. Կ. Բալտրուշայտիս, Իւ. Ի. Վերխովսկի և Վեաչ. Իվանով յաջորդաբար կարդացին մեր միջնադարեան և նոր բանաստեղծութիւններից թարգմանական կտորներ (իւրաքանչիւրը կարդում էր իր թարգմանածը): Որքան հնարաւոր է դատել առաջին տպաւորութիւնից, պէտք է ասենք, որ թարգմանութիւններն ընդհանուր առմամբ հարազատ էին, բայց ոչ միշտ աջող: Օրինակ Թումանեանի, Իսահակեանի և Դուրեանի ստանաւորներից մի քանիսը կորցրել էին այն քաղցրութիւնը և գեղեցկութիւնը, որը հնարաւորութիւն ունի վայելելու հայ ընթերցողը: Աջող էին ընդհակառակը Գ. Աղթամարցու «Գարունն եկաւ», Զիւանու «Զախորդ օրերս», Յովհաննիսեանի «Վահագնի ծնունդը» և Ծատուրեանի «Նաւավար» ստանաւորները: Չը գիտենք՝ ինչու, Տէրեանից կտորներ կարդալուց յետոյ զանց առնելով մեր ռուսահայ և թիւրքահայ մի շարք երիտասարդ բանաստեղծներին՝ հարկ համարեցին մի թարգմանութիւն կարդալ Տէր-Մարտիրոսեանից:

Վերոյիշեալ թարգմանութիւնների մասին վերջնական գաղափար կարող ենք կազմել այն ժամանակ, երբ մեր ձեռքի տակ ունենանք Մոսկվայի հայկական կոմիտէտի ռուսերէն լեզուով հրատարակելիք ժողովածուն, որը խմբագրել է Բրիւսովը և որը լոյս կը տեսնէ երկու երեք ամիս յետոյ: Այնտեղ կարելի է գտնել թէ այդ թարգմանութիւնները և թէ ուրիշ լաւագոյն չափածոյ գրուածքներ՝ թարգմանված մեր նորագոյն բանաստեղծներից:

Դեռ չէր վերջացել ստանաւորների ընթերցումը, երբ ներս մտաւ բանաստեղծ Բալմօնտը և մի ընդհանուր հետաքրքրութիւն թէ ոգևորութիւն առաջացրեց հանդիսականների մէջ: Ընդառաջ գնալով իր ընկերների ցանկութեանը՝ նա կարդաց իր կատարած երկու թարգմանութիւնները, առաջինը՝ Վահան Տէրեանից, երկրորդը՝ Զապէլ Ասատուրից (Սիպիլ): Բալմօնտի գրչի տակից շատ գեղեցիկ էր դուրս եկել իսկապէս Տէրեանի «Բարակիրան նախրուհին ինձ ժպտաց» կտորը: Աւելացրէք դրա վրա նաև Բալմօնտի տպաւորիչ արտաքինը, նրա գեղեցիկ և ոգևորված արտասանելը, այն ժամանակ ձեզ համար պարզ կը լինի, թէ հանդիսականները ինչպէս կլանված լսում էին նրան:

Գիշերվայ ժամը 1-ին հասարակութիւնը գոհ սրտով սկսեց ցրվել սրահից:

Ս. Ոսկերչեան

ԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Жизнь и Знаніе» հրատ. ընկերութ. հրատարակութեամբ մօտ օրերս լոյս կը տեսնի Մաքսիմ Գորկիի առակների ժողովածուն, որոնք վերցված են գլխաւորապէս իտալացիների կեանքից:

◆ Գերմանիայի Հայդելբերգ քաղաքում այս օրերս, 68 տարեկան հասակում, վախճանվեց գերմանացի ականաւոր գիտնական փիլիսոփայ Վիլհէլմ Վինդելբանդը:

◆ Թուրինում վախճանվեց Լէօնարդօ դա Վինչիի երկերը ուսումնասիրող Ջիովանի Պիումատի:

◆ Այս ամսվայ սկզբներում Պարիզում դադարեցրեց իր գոյութիւնը ֆրանսիական հնամեայ «Gazette de France» թերթը, որ հրատարակվում էր 300-ից աւելի տարի: Այս տեղի է ունենում կուլտուրական Ֆրանսիայում, իսկ խաւար Չինաստանում, մի տարօրինակ զուգադիպութեամբ, պատրաստվում են տօնել «Չինական Տեղեկատուի» 350-ամեակը: Ինչպէս հաշտեցնել կուլտուրական խաւար երկրների միջև տեղի ունեցող հակասութիւնը: Բացի այդ «Տեղեկատուն» Չինաստանում հրատարակվում է առաւել հին մի թերթ, որ կոչվում է «Պէկինի լրագիր», որի մէջ տպվում են կառավարական կարգադրութիւնները: Այս թերթը սկսվել է հրատարակվել IX դարից:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 24 հոկտ.

«Մշակի» այսօրվայ № 235-ում արտատպված է «Зак. Рѣчь» լրագրից մի տեղեկութիւն, թէ «Դիլիջանի կոմիտէտի միջոցով օգոստոսի 10-ից մինչև հոկտ. 5-ը անցել են 5545 փախստականներ և բաց է թողնված ուտելիք 42,942 մարդու համար»: Խմբագրութիւնը իր կողմից աւելացնում է. «Անհրաժեշտ է ճշդել այս բանը. որդեօք թիւրիմացութիւն չէ՞ սա». Խնդրում եմ չը մերժէք տպել «Մշակի» առաջիկայ համարում հետևեալ պարզաբանութիւնը այդ առիթով.

Նախ պէտք է ասեմ, որ յիշեալ հաշիւը կազմված է ոչ թէ մինչև հոկտ. 5-ի ժամանակամիջոցի համար, այլ մինչև հոկտեմբ. 15-ը. յետոյ 42,244 թւի տեղ պէտք է լինի 49,952 բ.:

Փախստականները, գալով Դիլիջան, մնում են այստեղ մի քանի օր, որովհետև նրանց մաքրվելու և հանգստանալու համար ստեղծված են մեծ յարմարութիւններ, այն է՝ կան բաղնիք, լուացարան, ճաշարան, ընդարձակ շինութիւններ ապրելու համար, հիւանդանոց և այլն:

Բացի այս, օգոստոսի երկրորդ կէսին և սեպտեմբերի առաջին կէսին հիւանդութիւնների պատճառով ոստիկանութիւնը հաստատեց կարանտին: Այս պատճառով փախստականները երբեմն մնում էին շաբաթներով ու ամեն օր կերակրվում էին 1000-ից մինչև 2000 հոգի: Ահա թէ ինչու, թէև անցնող փախստականների թիւը եղել է 5545 անձ, բայց յիշեալ ժամանակամիջոցում այդ փախստականները ստացել են 49,952 ճաշ և այլ տեսակի սնունդ: Սնընդատու կէտում ամեն օր պաշտօնեաներ կոմիտէտի հսկողութեան տակ ցուցակագրում են եկողներին, սնւողներին և գնացողներին. նոյնը անում է և տեղական ոստիկանութիւնը առանձին: Երկու ցուցակագրութիւններն էլ միմեանց համապատասխանում են:

Նախագահ Դիլիջանի Կոմիտէտի Համառուսական Քաղաքների Միութեան՝

Ս. Յարութիւնեան

—

Թիֆլիս, 23 հոկտ.

Ճշմարտութիւնը վերականգնելու համար խնդրում եմ տպագրել հետևեալ երկտողս.

«Լումայ» թերթի № 1-ում կարդացի Կաթողիկէ ս. Գէորգ եկեղեցու միաբանութեան և հոգաբարձութեան միջոցով հաւաքված գումարների մասին յօգուտ հայ որբերի. գումարներից մէկը 46 ր. 50 կ., միւսը՝ 18 ր. 73 կ.: Թիւրիմացութիւնը պարզելու համար պէտք է յայտնեմ, որ այդ գումարները հանգանակել եմ ես իմ ծխականների շրջանում, իսկ հոգաբարձուները և միաբան քահանաները, ինչպէս երևում է նոյն ցուցակից, ոչինչ չեն արել. մինչդեռ շտապել են իմ հանգանակած գումարներն իրանց անունից նուիրաբերել յանձնաժողովին: Ասածս հանգանակութեան մասին ունեմ անդորրագրեր (№№ 144 և 285) և մատեան:

Ստ. ա. ք. Սամուէլեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

Թիֆլիս, 22 հոկտ.

Շնորհակալութեամբ ստացանք պ. Վահան Տէվկանցէն Կարսում՝ Աբրահամ Փոթիկեանի ընդ Հեղինէ Սողոմոնեանի հարսանեաց միջոցին նուիրաբերուած 23 ր. 78 կոպէկ ի նպաստ Համբարձում Ոսկերչեանի թողած երեք որբերուն (Յովհաննէս, Վարդան, Վահան):

Նուիրատուներն են իրենց ամուսիններով մէկտեղ՝ Աբրահամ Փոթիկեան, Շապուհ Վարդանեան, Կարապետ Յակոբեան, Սարգիս Գրիգորեան, հաջի Նազիկ Թումաջեանց, Յովհաննէս Սողոմոնեան, Սմբատ Զարբջեան, Սիմէօն Տէր-Յովհաննէսեան, Մկրտիչ Զարտօեան, Յովհաննէս Բժեան, Մեսրոպ Զաքօեան և Վահան Տէվկանց:

Արամ Տէր-Սարգիսեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինսկ., Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ. ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—180

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ
ՏՐԻՊԵՐԻ (սուսունակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսունակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից: Այժմ այդ հիւանդութիւնը բըժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայաթղթով:

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում: Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանց:

Այն կասկածանքը բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն դըժուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ:

Գուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ գուցէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են: Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենահնացած տեսակը:

Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնելու, որ «Ռապիդ» գործ ածելու ժամանակ չը բուժվելու դէպք չէ եղած և իւրաքանչիւր հիւանդ, որ գործ է ածել երկու կրկնակի սրուակ «Ռապիդ», անպայման առողջացել է, որքան որ հիւանդութիւնը տևած լինէր:

Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաւատարմացումը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, ի հաստատութիւն որի Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 2 սրուակ պատրաստուկ (բուժման ամբողջ կուրսը) ես ձրի ուղարկում եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱՒՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ գրվողը չը բժշկվի: Այս թղթի պատճէնը այս է.

«Ես, ի ներքոյ ստորագրողս, տալիս եմ այս թուղթը պարոն այս ինչին այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 2 կրկնակի սրուակ հօնօրէյի դէմ, երաշխաւորում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ: Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաբորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնելու:

Աւելի լաւ համոզելու համար ես վճռեցի ամեն մի յայտարարութեան մէջ տեղաւորել նորանոր շնորհակալական նամակներ: Այս նամակների իսկականները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել: Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որևէ բարեգործական նպատակով:

Յարգելի պ. Դէլամուրէ! Պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ ես առողջացած եմ: Ես կարող եմ նորից կեանք քաշել: Ես չը գիտեմ, թէ ինչ խօսքերով կարող եմ գովաբանել ձեր պրէպարատը: Նա բուժում է հիւանդութիւնը, բառի բուն նշանակութեամբ, այնպէս, որ համարձակ կարող եմ առաջարկել իւրաքանչիւր նոյնանման հիւանդի: Մնում եմ կատարեալ յարգանքով Գ. Վ. Գուլիկէն: 16 մայիսի 1914 թ.:

Երկու կրկնակի սրուակի և մի արկղիկ պիլիւլների (լրիւ բժշկվելու կուրսը) գինն է 9 ռուբլի: Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 ռուբլի: Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ:

Պատուէրները հասցէագրել միմիայն.

Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы, д. Кредитнаго О-ва.

Հեռագրական հասցէն՝
Тифлисъ—Американецъ.
(Կ.) 609. 50—8

0—61 174. (Հ. Կ.)

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարան. Սեմեոնովսկայա, № 16.
(Հ. Ու. Կ.) 1018. 100—98

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
(Հ. Կ.) 761. 50—1

! Զգուշացէք կեղծիքներից !
ՊՐՕՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրնօ-Տիմօլեան
Սապօն
Քրտինքի, պզուկների, պէպէնների, ուգրների, պզուկների և դեղին խալերի դէմ:
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ
ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ:
Վաճառվում է ամենուրեք.
կտորը 50 կոպէկ, կէս կտորը 30 կոպէկ:
(Կ.) Г. 26—14
Ոսկէ մեդալ Լոնդոն 1893 թ.
[illegible] Г. Ф. Юргенсъ.

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների [illegible]՝ սրսկումներ, մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սուր եւ խրօնիքական տրիպերի, փափուկ ու կոշտ շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն դեղերով. բժշկական-առողջապահական խորհուրդներ: Եկւոր օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կոնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն): Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և բէյցպաներ 3 ռուբլի վճարով: Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ: Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը: Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վեներական սեռերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու բէյցպաներով, գ. 50 կոպ., 2) «Փորձառական բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 30 կ., 3) «Ծիծաղի սեղան»՝ անեկդօտներ, գ. 20 կ., 4) «[illegible]», ծիծաղաշարժ վօդվիլ, գ. 20 կ., 5) «Բաքէբ», գ. 10 կ., և ճանապարհի ծախս 20 կոպէկ:
(Հ. Կ.) 311. 100—49

ՕԳՏՎԵՑԷՔ ‚ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
Գործնական հրահանգութեան
◆ ԿՈՒՐՍԵՐԸ ◆
Այս նոր կուրսերը մանաւորապէս պատրաստված են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնոտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առանց միջնորդի սոսկ մտքի ոյժով:
Ընթերցողը Հիպնոտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում:
Հիպնոտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գողութիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել՝ ինչ որ վատ է, ու ներշնչել՝ ինչ որ լաւ է և օգտակար:
Հիպնոտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր ենթակային հեռու վայրեր, ուր գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ:
Հիպնոտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և ապշեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ): Հիպնոտիզմով դուք կարող էք իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել կամ թաքցրած իրերի տեղը:
Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պէտք դիմել նամակով հետևեալ հասցէով. СУСАННА ШЕКЕРЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.
(Կ.) 766. 20—1

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի: Հեռախօս № № 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից:
Հորիզոնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամմ:
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով:
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ):
Ջրի շարժիչներ (տուրբինաներ):
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից:
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից:
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից:
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՈԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից:
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով:
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ. Կ.) 551. 150—142

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.